

կայողները, նոցա ընդունելութեան պայմաններով մէկ տեղ:

Առաջիկայ ուսումն. տարուայ համար Ուսուցչական խմբի մէջ բաց են առ այժմ բարձր դասարանների ուսուց լեզուի և մաթեմատիկական առարկաների ուսուցիչների ու երկու վերակացունների տեղեր:

Ճեմարանի մատենադարանի համար անցեալ ուսումն. շրջանի ընթացքում նուէր են ստացուել:

- ա) 602 կտոր գիրք (466 ուսուցիչներին, 146 օտար լեզուներով և 10 հայերէն) Հանդուցեալ Գր. Զանչեանի ճեմարանին կտակած դրադարանից.
- բ) 147 կտոր արժէքաւոր հրատարակութիւններ Վսեմ. Կ. Եղեանից.
- գ) 17 կտոր նախկին Հրատարակչական ընկերութիւնից.
- դ) 79 կտոր այս տարի դպրանոցական բաժինն աւարտողների կազմած դասարանական դրադարանից.
- ե) 118 կտոր Ծնորհ. Ենայի սարկաւազից.

Սակաւաթիւ օրինակներով ուրիշ զանազան անձերից:


Պարտք ենք համարում յիշել, որ անցեալ ապրիլ ամսին հրատարակուած տեսչի տեղեկագրի մէջ մոռացուել է թիւրիմացութեամբ Ն. Նախիջլեանի փոխանորդ Հ. Մուշե վարդապետի ճեմարանի քսան և հինգ ամեակի առթիւ արած նուէրը՝ 273 կտոր ուսուցիչներին և հայերէն գրքեր, որոնցից անկազմներն ևս նորա հաշուով կազմուեցան:

Այլ և հանդուցեալ Խորէն եպիսկոպոսի յիշատակին Մոսկուայում մի քանի յարգողների մէջ ժողովուել և աշակերտաց ընթերցանութեան համար գրքեր գնելու պայմանով նուէր է ուղարկուել պ. Խաչատուր Ք. Յովհաննիսեանի ձեռքով 256 բուբլի, որի հաշուին մասամբ գրքեր գնուած են արդէն առանձին յանձնաժողովի ընտրութեամբ, մասամբ ևս պէտք է գնուին:

Մատենադարանի համար նուէր է ստացուել 100 ր. պ. Սարգիս Հախնազարեանից, որի հաշուին գնուեցան դիպուածաբար մեծ

ղիջումով վաճառուող գերմաներէն ընտիր ընթերցանութեան գրքեր:

100 ր. ևս Օդեսայից, պ. Մ. Մուրաեանից էր նուէր ստացուել Արժ. Բենիկ վարդապետի ձեռքով, որ դորժագրուել է դնելու համար, նոյնպէս դիպուածաբար զիջումով վաճառուող՝ Գրիմի հանրահաշակ գերմաներէն բառարանի մինչև այժմ լոյս տեսած հատորները:



Թ Ի Ի Ի Մ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ի .

Մշակ լրագրի 107 համարում մեղադրանքի ու լուտանքի մի ամբողջ հեղեղ է թափած Հայոց ազգի եւ Մայր Աթոռի գլխին այն պատճառով, որ իբր թէ Խաչատուր Արովեանի թողնելը՝ Վարդան Արովեանի որդիք, վերջինիս մահից յետոյ անոց անապահով դրութեան մէջ են մնացել: Թէ ինչով մեղապարտ է Հայոց ազգը, որ Խաչատուր Արովեանի թողնելը իրենց հօրից հարստութիւն չեն ժառանգել եւ «պիտի ձեռք մեկնեն բարեբարներին», որպէս զի «պարեն» ուսում առնեն», այդ քացատրելը մեր կարողութիւնից վեր է. ըսյց կկամենայինք մի քանի տեղեկութիւններ տալ այն մասին, թէ Հայոց ազգն ու Մայր Աթոռը ինչպէս են վերաքերուել դէպի այդ որբերը, երբ նոցա անապահով են մնացել:

Վարդան Արովեան մեռաւ իբրեւ ս. Էջմիածնի ճեմարանի ուսուցիչ: Ճեմարանի վարչութիւնը պիտեց անմիջապէս Վեհափառ Հայրապետին, ինչորելով թոյլ տալ հանգանակութիւն քանալու յօգուտ նորա որբերի, եւ կենսաթոշակ նշանակել այրու համար: Հանգանակութիւնը, ինչպէս ժամանակին Արարատի մեջ ծամուցուել է հետզհետէ, 3000 բուբլուց անցաւ. գոյացած գումարը քանկ տըրուեցաւ որբերի անունով պայմանաւ, որ այրին ստանայ տոկոսիքը, մինչեւ նոցա չափահաս

դառնալը: Բացի այդ, Ժամհարեան եղբարք իրենց ծախքով տպուած Խաչատուր Արովեանի երկասիրութիւնների ամբողջ 3000 օրինակը: 1 ր. զին նշանակելով օրինակին, դրին Տիկին Արովեանի տրամադրութեան ներքոյ, որքերի պահպանութեան համար: Մնչեւ այդ բոլորն ստանալը Վ. Արովեանի ընտանիքը ապահովուած էր այնու, որ նա ուսումնական տարուայ սկիզբներին վախճանուեց: Իսկ ընտանիքը նորա ամբողջ տարուայ ռոճիկը ստացաւ: Ռոճիկի հատուցումը դադարեցուց անմիջապէս յետոյ տարեկան 300 ր. կենսամոռշակ նշանակուեցաւ նորա ընտանիքին եկեղեցական եկամուտներից:—Մշակի վերոյիշեալ յօդուածը գրելու իսկական շարժառիթն այն է եղել, որ այդ եկամուտների նկատմամբ եղած մի նոր կարգադրութեան շնորհիւ դեւանական գրագրութիւնները ձգձուցել են: Եւ այրին միառժամանակ իւր թոշակը չի ստացել: Բայց երբ նա խնդրագրով դիմել է ուր հարկն է՝ պատշաճ կարգադրութիւն եղել է, եւ նա ստանալով բոլոր սպասիկները՝ շարունակում է ստանալ կանոնաւորապէս իւր թոշակը: Նորա դատի պաշտպանները թող հանգստանան:

Վ. Արովեան քացի այրի կնոջից թողել է 3 արու եւ 2 աղջիկ զուակներ: Անդրանիկ որդին ս. Էջմիածնի Ճեմարանի դպրանոցական քաժինն աւարտելով, պ. Մանթաշեանի ծախքով գնացել է արտասահման քարծրերթութիւն ստանալու: Երկրորդ որդին ուսանում է Երբեւ ձրիաթոշակ որդեգիր նոյն Ճեմարանում: Երրորդ որդին ուսանում է Երբեւ ձրիաթոշակ որդեգիր Լազարեան Ճեմարանում: Մեծ դստեր, որ ուսանում է Երբեւանի գիմնազիայում, որդեգրեց առ ժամանակ մի երբեանցի տիկին. քայց մայրը Երբեւան փոխադրուելով՝ իւր մօտ առաւ նորան, եւ այժմ՝ քարի տիկինը երբեմնապէս միայն կարող է նորան իւր խնամքը ցոյց տալ: Միւս դուստրը փոքր է դեռ, մօր խնամքի տակ:

Արդ, ի՛նչ է մնում՝ դեռ անել Հայոց ազգին Խաչատուր Արովեանի թոռների սպասուածութեան համար:

Մի արհամարհական զայրացկոտ ակնարկ եւս քարեհաճել է նոյն լրագրի 115 հ.-ում՝ բժշկապետ պ. Վ. Արծրունին նետել Մ. Աթոռի ու նորա տպարանի վերայ, որի շարժառիթը եղել է «Բազմավէպ»-ի մի նկատողութեան համար Մշակի 109 հ.-ում՝ լոյս տեսած մի ուրիշ յօդուած:—Որ Հայոց ազգի դատը ձրի պաշտպանողներն ու նորա պակասութիւնները մտրակողները տասնեակ տարիներից ի վեր պնդում են ու պնդում թէ ս. Էջմիածինը պարտաւոր է ամէն քան անել ազգի համար՝ սովեալներին կերակրել, գաղթականներին պահել, որքերին սնուցանել ու կրթել, ցրուածներին ժողովել եւ հովուել: զրբեր հրատարակել, ուսումնասիրութիւններ կատարել եւլն եւլն, քայց իրաւունք չունի ոչինչ պահանջելու կամ՝ սպասելու ազգից՝ այդ անզուգական տրամաբանութիւնը յայտնի է ամէնքին: Որ այդ տրամաբանութիւնը շատ ձեռնտու է Մխիթարեան հայրերին եւ, երբ նետերի տարափ է թափուում՝ հարազատների կողմից դէպի «հայութեան սիրելի սիրտը Վաղարշապատի մէջ», մի նետ եւս իրենց կողմից ձգելն ու փոթորիկ հանելը ժամանակի պահանջ եւ նպատակայարմար գործ պէտք է համարուի՝ դորան եւս խօսք չունինք, Կրասականանանք միայն մի դիտողութիւն անելով: Եթէ վերջին ժամանակներս ս. Էջմիածնի անունով կտակներ եղել են՝ դորա հայրէնէնէնը—չուայլ գանձերուն եւ պարարտ կտակներուն» խղճուկ փշրանքներն են միայն եւ կտակուած են ոչ թէ ձրի զրբեր տպելու, այլ նպատակելու, որ հոգեւոր եւ քարոյական կրթութիւն տրուի ու հայոց լեզու ուսուցուի աւելի քան երկու հարիւր տղաների այն ժողովրդի զաւակներից, որի մէջ հոգեւոր ու քարոյական սնանկութիւն է տիրում եւ մայրենի լեզուն խեղդամար քնում՝ օրէցօր. մինչ այնտեղ, ծովի միւս կողմ, հին հին կրեոսանների «չուայլ գանձերով եւ պարարտ կտակներով» յոյժացած հայրերը մի քանի տասնեակ պանդուխտ հայ պատանիներ են սնուցանում՝ միայն կաթուղիկութիւն կոչուած ամհնակուլ որովայնի համար, եւ նախնեաց ստուերի տակ թագելով շարունակում՝ պապու գինը դնել իրենց մի քանի ողորմելի հրատակութիւնների վերայ:

որոնց համար յիրաւի շատ առատ նուէրներ են ստացել մի ժամանակ եւ որոնց հրատարակութիւնը իրենց միակ կոչումն է, միակ օրինական գործը: միակ պարծանքը: — եւ դեռ ճրի հրատարակութեան կոչ են անում՝ Մ. Աթոռին, որ ծնուած է քազմադիմի հոգսերի տակ:

Գանք պ. Բժշկապետին: Նորան մեծ ցաւ է պատճառել: որ տարիներ առաջ նորա «Էջմիածնի տպարանական վարչութեան ուղարկած» «մի ընդարձակ, լաւ մշակուած առողջապահական էտիկոլը» կորել է. ոչինչ չունինք հարկաւ դորա դէմ. մենք եւս շատ ցաւում ենք, որ չենք կարող ցոյց տալ, թէ ո՞ւմ ձեռքն է հասել եւ ինչո՞ւ է կորել այդ պատուական էտիկոլը: Բայց թէ ի՞նչ քարեմտութեամբ պ. Բժշկապետը չի յիշում ամենեւին, որ երբ, Վեհափառ Հայրապետի պատուէրը կատարելով եւ «Սուքիաս արքեպիսկոպոսի յորդորական նամակներին» անսալով մի ընդարձակ յօդուած գրեց ժանտախտի մասին եւ ուղարկեց Արարատի խմբագրութեան՝ առանձին գրքուկով տպուեցաւ: Արարատի ըլլողը քաժանորդներին, մի քանի հարիւր օրինակ էլ այնպէս ցանկացողներին՝ ճրի քաժանուեցաւ*, — այդ դժուարանում ենք քացատրել: Պ. Բժշկապետը վճռել է երեսը շուռ տալ լուրորովին ս. Էջմիածնից եւ այլեւս ոչ մի յարաբերութիւն չունենալ նորա տպարանի հետ այն պատճառաւ, որ «չնայելով այդ վերադարձական վերաբերմունքին», վերջերս կրկին լսել է «տպարանապետի» խնդրքը եւ պատրաստել է մի քանի գիտնական—առողջապահական յօդուածներ Արարատի համար՝ այն պայմանաւ, որ իւրաքանչիւրից առանձին գրքուկներով արտատպեն 1200 օրինակ եւ տան իրրեւ իրեն վարձատրութիւն՝ իսկ վարդապետը համարձակուել է պատասխանել, թէ տպարանը կարող է տալ միայն 300—400—600 օրինակ: Գուցէ ընթերցողին զարմանալի կ'ըլլի, թէ պ. Բժշկապետին զայրոյթ պատճառող յանդուութիւնը ո՞րն է այստեղ: Բայց նա պատճառներ շատ ունի: Վարդապետը նախ պէտք է գուշակէր, որ նա իւր

ստացած օրինակները ճրի կըստանէ. ապա ընդունէր նորա հետ, որ «արտատպումը քիչ արժէ մասնաւոր տպարաններում: իսկ Էջմիածնի տպարանում՝ ուղղակի ոչինչ չարժէ», ենթադրէր, որ նա կարող է մի շաքաթ աշխատած, 25 բուբլու գիրք գնած, իւր գործը թողած լինել յօդուած գրելու համար: Եւ ահա, որովհետեւ «...» մտածել է դորա փոխարէն, թէ 1200 օր. արտատպութիւն ինչպէս ամէն տեղ, այնպէս նաեւ ս. Էջմիածնի տպարանում մի քան արժէ. թէ եթէ յօդուածն այնչափ փոքր է, որ արտատպութիւնը քիչ քան արժէ, ուրեմն նորա գրելու համար էլ ամբողջ շաքաթ գործ դրած չեն լինի եւ գործերը թողած. թէ այդպիսի յօդուածներ գրելու համար մեզանում՝ 25 բուբլու գիրք չեն գնում: այլ իրենց ունեցած մի կամ կէս բուբլիանոց գրքից են օգտուում, կամ երբեմն նոյն իսկ ոչինչ չարժող մի քրագրական յօդուածից. թէ վերջապէս տպարանը մի առեւտրական հաստատութիւն է, որ կարող է Վեհափառ Հայրապետի հրամանով Մ. Աթոռի կամ այս ու այն քարերարի հաշուին գործ կատարել, քայց ճրի կամ անհաշի կերպով երբէք. միշտեւ անհաշի կ'լինէր Արարատի իւրաքանչիւր յօդուած 1200 օր. արտատպել հեղինակին ընծայելը, եւլն. եւլն.— Պ. Բժշկապետը զայրանում է, վերջն էլ իւր յօդուածը հիւրընկալող եւ իւր գործունէութիւնը շատագովող թերթին պարգեւատրած լինելու համար համեմատում նորա «լուսամիտ, լուրջ, սրտակից վերաբերմունքը դէպի այն ամէնը, ինչ որ լաւ է, ազգօգուտ է» «հայրութեան սիրելի սրտի եսամոլ կուրութեան հետ»: Իրողութիւնն այն է սակայն, որ մինչ «Բազմալէպը», «Մշակը» եւ ուրիշ լուսամիտ թերթեր ու անձինք ճրի շատագովել են միայն քժշկապետ Վահան Արծրունու հանրամատչելի առողջապահական յօդուածներ եւ գրքուկներ գրելու ազգօգուտ ծառայութիւնը, «Հայրութեան սիրելի սրտի» տպարանը 3000 օրինակ ճրի տպագրեց ու ցրուեց նորա երկասիրած գրքուկը, ճրի տպագրեց անցեալ տարի եւ ցրուեց քժ. պ. Ա. Բարսեղեանի միջոցաւ ստացուած մի քանի առողջապահական յօդուածներ, որոնց նման շատերն էլ Արարատի մէջ է

* Բժ. Վահան Արծրունի, — Ժանտախտ. Վարդապետ, 1897. (պարունակում է 80 փոքրագիր էջ):

տպագրել: այս անգամ եւս կարտատպէր եւ ծրի կցրուէր անշուշտ: Վեհափառ Հայրապետի համութիւնն առնելով ըժ. պ. Արծրունու նոր յօդուածները, եթէ նա վերջին հոգար տպարանի վերայ թողնէր, փոխանակ գուշակել տալու: որ իւր վերայ է առնում:

ՏԵՃԿԱՀԱՅՔ:

Բաղէշէն կը գրեն մարտ 10 թուականով:—Մշոյ Ս. Կարապետի վանուց պատմիարանութիւնը՝ յատուկ գրութեամբ մը խընդրած է Քեր. Հայր Զիլինկիրեանէ տը միջնորդէ Վսեմ. կուսակալին քով փանայտական ինչ ինչ տրոյ առանձնաշնորհման գործադրութեան մասին: որուն համար միարանութիւնն ալ դիմում ըրած է Վսեմ. կուսակալին: Կը յուսանք թէ Վսեմ. կուսակալի իր բարեսիրական հոգատարութեամբ բարեհաճի ի նկատի առնել ս. Կարապետի պէս մենաստանի մը անձուկ փիճակը և արժանը անօրինել:

— Բաղէշէն կը գրեն. — «Տեղւոյս Աւսուժնական Խորհուրդը այսօրու ընէ կը խորհի յառաջիկայ շրջանին բողոքական հայոց վարժարանաց հետ միացնել՝ քաղաքիս արդէն միացեալ վարժարանները:

— Գոհութեամբ կիմանամք թէ, Գարակէօզեան Ազն. Գրիգոր էֆէնտի երէկ Ազգային Հիւանդանոցի հոգարարձութեան ստանապետ Կիւլպէնկեան Պատրիկ էֆ. ի յանձնել է այն 600 ոսկին՝ որ Գարակէօզեան ստակին տոկոսը կը կազմէ, և վարչութեան որոշման համեմատ պիտի յատկանայ հիւանդանոցի որբանոցին: Հոգարարձութիւնը իւր երէկուան նիստին մէջ երկարօրէն խորհրդակցեցաւ այդ զումարին գործածութեան եղանակներուն վրայ:

— Արարկիրի առաջնորդ Մուշեղ Ծ. վարդապետ տեղւոյն կարօտեալներուն համար 100 ոսկւոյ նպաստ մը խնդրել է Պատրիարքարանէն:

— Տիարպէրի մէջ գերմանական որբանոցի մը բացումը յաջողութիւն գտած չըր

լալով գերման որբանոցները սկսած են Երեսիս փոխադրել տեղւոյն որբերը:

— Ռոտտութոյի նորընտիր առաջնորդ Տ. Ներսէս Արքազան իր պաշտօնատեղին հասնելով ջերմագին ընդունելութիւն գտել է տեղացիներէն:

— Բաղէշէն կը գրեն մարտ 17 թուականով:— Խիզանու ս. Խաչ վանուց որբանոցին մէջ առ այժմ կը պատասպարուին քսան հաս որբուկներ, այդ որբանոցը կընդունի Ազգ. Պատրիարքարանէ 15 օսմ. ոսկւոյ նպաստ մը: Կը լսենք որ այդ թիւը ի մտոյ պիտի կրկնապատկուի: Վսեմք ի փիճակի է մատակարարելու յորեն և պողեղէն. քանի որ այդպէս է, որբերու թուոյն կրկնապատկումը և կարող ուսուցաց անուանումն ալ իրաւամբ պիտի պահանջուի: նաև համեստ արհեստանոցի բաժնի մը յաւելումը:

— Տեղւոյս Քաղ. Ժողովը յանձնարարեց Խնդիր Կատարի որբանոցի խնամակալութեան որ փութայ շնորհակալութեան զիր մը գրել անդիտոցի միտինար ազնիւ Մըթքը ձորձին: որ շարժառիթ եղած է որբանոցին համար յղելու 50 օսմ. ոսկւոյ կահագործութեան գերձակութեան գործիներ, որոնց մեծագոյն մասը հասած է և մնացեալ երկու սնտուկներն ալ կը սպասուին:

— Միգրիհիտարէն կը գրեն. — Այսօր յուզարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ հանդուցեալ մհի. Ստեփան ազա Փոսուեանի: որ 20 օրէ ի վեր կը տառապէր ժանտաստեղէ: Մէկ ամիս առաջ քուէներու առաւելակիս մեծամասնութեամբ Քաղ. Խորհրդոյ սնկամ ընտրուած էր: Կտակեց 300 ոսկի քաղաքիս մէջ վարժարան մը շինուելու համար, 50 ոսկի ս. Փրկչի հիւանդանոցին, 50 ոսկի տեղւոյս աղքատասինամ ընկերութեան, 3 ոսկի Աստուց ընկերութեան, 50 ոսկի ալ՝ կալուածի սնկի գոյացած հստոյթը վարժարանոց ծախքերուն յատկացուելու համար:

— Փոքրիկ Հայ գաղթականութիւն մը կազմուած է ի Տար—իւս—Սարամ, զիտա որ կեզրն Արեւիկեան Սփրիէի գերման գաղթականացին, Զանդիպարի զիմացը: Հայ գաղթականաց մէկ մասն Եգիպտոսէն, մէկ մասն ալ Հնդկաստանէն գացած են Պոնպոյի ձամբով: